ԿԱՅԱՑԱՎ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳԱՎԱԹ 2024» ՄՐՑԱՇԱՐԸ

16.03.2024 15:00

ՀՀ փաստաբանների պալատում անցկացվեց «Փաստաբանների շախմատի գավաթ 2024» մրցաշարը, որին մասնակցում էին փաստաբաններ և ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիրներ:

«Փաստաբանների շախմատի գավաթ» մրցաշարը ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբն իրականացնում է ամեն տարի՝ հաշվի առնելով փաստաբանների հետաքրքրվածությունն այս ինտելեկտուալ մարզաձևի նկատմամբ:

Այս տարի մրցաշարն իրականացվեց յոթ խաղափուլով՝ շվեյցարական համակարգով, որի արդյունքում հաղթողների կազմն ունեցավ հետևյալ տեսքը.

1-ին տեղ՝

Կարեն Ջոհրաբյան – ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիր

2-րդ տեղ՝

Ջոհրակ Ապրեսյան – փաստաբան

3-րդ տեղ՝

Դավիթ Ղազարյան – փաստաբան

4-րդ տեղ՝

Կարեն Մեժլումյան - փաստաբան

Պատվավոր տեղերը զբաղեցրած մասնակիցները պարգևատրվեցին պատվոգրերով և մեդալներով:

Պարգևները հանձնեց ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը:

Շնորհակալություն ենք հայտնում միջոցառմանը մասնակցած մեր բոլոր գործընկերներին:





Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })